ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-ապրիլ)





2024թ. հունվար-ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 668.5 մլրդ դրամ, ինչը 131.9 մլրդ դրամով կամ 16.5 %-ով պակաս է 2023թ. և 253.9 մլրդ դրամով կամ 61.2 %-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 537.2 մլրդ դրամ, ինչը 18.5 մլրդ դրամով կամ 3.6 %-ով պակաս է 2023թ. և 294.1 մլրդ դրամով կամ 121 %-ով ավել է 2022 թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 131.3 մլրդ դրամ, ինչը 150.4 մլրդ դրամով կամ 46.6%-ով պակաս է 2023թ. և 40.2 մլրդ դրամով կամ 23.4 %-ով պակաս է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

2024թ. հունվար-ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1672.4 մլն դոլար, ինչը 372.7 մլն դոլարով կամ 18.2%-ով պակաս է 2023 թ. և 812.3 մլն դոլարով կամ 94.4%-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 1344.9 մլն դոլար, ինչը 19 մլն դոլարով կամ 1.5 %-ով ավել է 2023թ. և 841.7 մլն դոլարով կամ 1.8%-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024 թ. հունվար-ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 327.5 մլն դոլար, ինչը 392.3 մլն դոլարով կամ 54.5 %-ով պակաս է 2023թ. և 29.4 մլն դոլարով կամ 8.2 %-ով պակաս է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**